

**Ա Ր Չ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն**  
**Երևանի պետական համալսարանի**  
**կենսաբանության ֆակուլտետի գիտական խորհրդի**  
**2016 թ. հունիսի 10-ին կայացած թիվ 9 նիստի**

Օրակարգում՝

- Առկա ուսուցմամբ ասպիրանտների ատեստավորման հարցը
- Դոցենտի գիտական կոչում շնորհելու հարցը
- Մենագրության տպագրման երաշխավորման հարցը
- Ընթացիկ հարցեր

Ֆակուլտետի գիտական խորհրդի կազմի 40 անդամներից նիստին ներկա էին 33-ը:

- **Առկա ուսուցմամբ ասպիրանտների ատեստավորման հարցը**

ԼՍԵՑԻՆ՝ կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի հեռակա ուսուցման ասպիրանտ Միքայել Գինոլյանի ատեստավորման հարցը:

ԵԼՈՒՅԹ ՈՒՆԵՑԱՎ՝ կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի վարիչ, կ.գ.դ., ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, պրոֆ. Ա.Հ. Թռչունյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ հաշվետու ժամանակաշրջանում Մ.Գինոլյանը պլանով նախատեսված աշխատանքները և ամբիոնի կարծիքը՝ ատեստավորել նրան:

- **Դոցենտի գիտական կոչում շնորհելու հարցը**

ԼՍԵՑԻՆ՝ մարդու և կենդանիների ֆիզիոլոգիայի ամբիոնի ասիստենտ, կ.գ.թ. Հասմիկ Ռուբենի Աղաբաբյանին, Էկոլոգիայի և բնության պահպանության ամբիոնի ասիստենտ, կ.գ.թ. Կարեն Արամայիսի Ղազարյանին, Կենսաբանության գիտահետազոտական ինստիտուտի գիտաշխատող, Բուսաբանության և սնկաբանության ամբիոնի ասիստենտ, կ.գ.թ. Եվա Խորենի Հովհաննիսյանին դոցենտի գիտական կոչում շնորհելու երաշխավորման հարցը:

ԵԼՈՒՅԹ ՈՒՆԵՑԱՎ՝ կենսաբանության ֆակուլտետի մրցութային հանձնաժողովի նախագահ, պրոֆ. Ֆ.Դ.Դանիելյանը: Նա ներկայացրեց մրցութային հանձնաժողովի եզրակացությունը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ հիմք ընդունելով ՀՀ գիտամանկավարժական կադրերին պրոֆեսորի և դոցենտի գիտական կոչումներ շնորհելու կարգի II 5Բ կետը՝ երաշխավորել Հ. Ռ. Աղաբաբյանին, Կ.Ա.Ղազարյանին և Ե.Խ.Հովհաննիսյանին դոցենտի գիտական կոչում շնորհելու համար:

- **Մենագրության տպագրման երաշխավորման հարցը**

ԼՍԵՑԻՆ՝ Բուսաբանության և սնկաբանության ամբիոնի աշխատակիցների՝ ակադեմիկոս Լ.Լ. Օսիպյանի, պրոֆ. Ս.Գ. Նանայուլյանի և կ.գ.թ. Ե.Յու. Սողոյանի ներկայացրած “Կենսամատենաիտություն” /սնկաբանական հետազոտությունների/ մենագրության հրատարակման հարցը:

ԵԼՈՒՅԹ ՈՒՆԵՑԱՆ՝ կենսաբանության ֆակուլտետի դեկան, ՀՀ ԳԱԱ թղթ.անդամ, պրոֆեսոր Է.Ս.Գևորգյանը, կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի վարիչ, ՀՀ ԳԱԱ թղթ.անդամ, պրոֆեսոր Ա.Հ.Թոչունյանը, Կենտրոնի և բջջաբանության ամբիոնի վարիչ՝ ՀՀ ԳԱԱ թղթ.անդամ, պրոֆ. Ռ.Մ.Հարությունյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ երաշխավորել “Կենսամատենագիտություն /սնկաբանական հետազոտությունների/” մենագրությունը հրատարակման:

ԼՍԵՑԻՆ՝ կենսաբանության ֆակուլտետի դեկան Է.Ս.Գևորգյանի հաղորդումը այն մասին, որ ս.թ. մայիսի 26-ին Հանրապետության նախագահի հրամանագրերով՝ բնական գիտությունների զարգացման բնագավառում ՀՀ նախագահի 2015 թ.-ի մրցանակ է շնորհվել կենսաֆիզիկայի ամբիոնի պրոֆեսոր, կ.գ.դ. Պողոս Հովհաննեսի Վարդևանյանին, պրոֆեսորներ Վալերի Առաքելյանին (ԵՊՀ ֆիզիկայի ֆակուլտետի մոլեկուլային ֆիզիկայի ամբիոն) և Արմեն Կարապետյանին (Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի ֆիզիկայի և էլեկտրատեխնիկայի ամբիոն)՝ «Նուկլեինաթթուների հետ կենսաբանորեն ակտիվ

միացությունների կապումը. տեսություն և փորձ» գիտական հոդվածների շարքի համար: Դեկան Գևորգյանը շնորհավորեց պրոֆ. Պ.Հ.Վարդևանյանին՝ ցանկանալով նրան հետագայում ևս բեղուն գիտական գործունեություն:

Պատասխան խոսքով հանդես եկավ Պողոս Վարդևանյանը: Նա շնորհակալություն հայտնեց բազում շնորհավորանքների, ոգևորող, սակայն միևնույն ժամանակ՝ պարտավորեցնող խոսքերի համար:

Գիտական խորհրդի նախագահ՝  
ՀՀ ԳԱԱ թղթ.անդամ, պրոֆ.



Է.Ս.Գևորգյան

Գիտական խորհրդի քարտուղար՝ ողջենտ



Ա.Ֆ.Կարապետյան